



## ՁԵԿՈՒՅՑ

ՄԵՏԱՂԱԿԱՆ ՀԱՆՔԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏՈՒՄ ՆԵՐԴՐՈՒՄԱՅԻՆ  
ԾՐԱԳՐԵՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ԳՈՐԾԱԴԻՐ ԻՇԽԱՆՈՒԹՅԱՆ  
ՄԱՐՄԻՆՆԵՐԻՆ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ԵՎ ՆՐԱՆՑ ԿՈՂՄԻՑ ԸՆԴՈՒՆՎԱԾ  
ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԵՎ ԱՅԼ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՕՐԻՆԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ,  
ՀԻՄՆԱՎՈՐՎԱԾՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԱՐԺԱՆԱՀԱՎԱՏՈՒԹՅՈՒՆԸ  
ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՂ ՔՆՆԻՉ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԿԱՏԱՐԱԾ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ  
ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

## Բովանդակություն

|                                                   |     |
|---------------------------------------------------|-----|
| ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ.....                                 | 3-4 |
| Հանձնաժողովի նիստերը և կատարված աշխատանքները..... | 5-  |
| 11                                                |     |
| Վերլուծություն.....                               | 11  |
| Թափանցիկություն և հաշվետողականություն.....        | 11- |
| 12                                                |     |
| ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ                                    |     |
| .....                                             | 13  |

## ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Սույն զեկույցում ներկայացվում է 26.09.2019 թվականին «Ազգային ժողովի կանոնակարգ» սահմանադրական օրենքի 20-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ [պատգամավորների ընդհանուր թվի առնվազն մեկ քառորդի պահանջով](#) ստեղծված / *Հանձնաժողովի լիազորությունների ժամկետը երկարաձգվել է 12.05.2020 թվականին «Ազգային ժողովի կանոնակարգ» սահմանադրական օրենքի 20-րդ հոդվածի 7-րդ մասի համաձայն՝ [Ազգային ժողովի](#) [որոշմամբ](#) [/http://www.parliament.am/committees.php?lang=arm&do=show&ID=111212&cat\\_id=729&show\\_session=&month=09&year=2019//](http://www.parliament.am/committees.php?lang=arm&do=show&ID=111212&cat_id=729&show_session=&month=09&year=2019//) «Մետաղական հանքարդյունաբերության ոլորտում ներդրումային ծրագրերի շրջանակներում գործադիր իշխանության մարմիններին ներկայացված և նրանց կողմից ընդունված ֆինանսական և այլ հաշվետվությունների օրինականությունը, հիմնավորվածությունը և արժանահավատությունը ուսումնասիրող քննիչ հանձնաժողովի» կողմից կատարված աշխատանքների ամփոփ արդյունքները:*

Քննիչ հանձնաժողովը բաղկացած է ԱԺ երեք խմբակցությունների ներկայացուցիչներից՝ համամասնության սկզբունքով:

Հանձնաժողովի ՔՆՆՈՒԹՅԱՆ ԱՌԱՐԿԱՆ Է հանդիսացել՝

- մետաղական հանքարդյունաբերության ոլորտում գործող տնտեսվարող սուբյեկտների կողմից գործադիր իշխանության մարմիններին ներկայացված և նրանց կողմից ընդունված ֆինանսական և այլ հաշվետվությունների օրինականության, հիմնավորվածության և արժանահավատության ուսումնասիրությունը և գնահատումը:

Հանձնաժողովի ԻՐԱՎԱՍՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏՆ Է եղել՝

- պահանջել և ստանալ Հանձնաժողովի քննության առարկա հանդիսացող հարցերի վերաբերյալ հաշվետվություններ, փաստաթղթեր և այլ անհրաժեշտ տեղեկություններ:

- Պատվիրել փորձաքննություններ և ստանալ դրանց արդյունքում կազմված եզրակացությունները:
- Հանձնաժողով հրավիրել իրավասու պաշտոնատար անձանց, ինչպես նաև այն անձանց, որոնք ներկայացրել են հանձնաժողովի իրավասության ոլորտին վերաբերող տեղեկություններ:

Քննիչ հանձնաժողովի մեթոդաբանական կողմնորոշիչներն են եղել Պետական մարմիններից ստացված փաստաթղթերի վերլուծությունը, ոլորտի ղեկավարների հետ պարբերաբար հանդիպումները և քննարկումները, այցերը պոչամբարեր՝ խնդիրներին տեղում ծանոթանալու համար, հանդիպումները միջազգային դոնոր կազմակերպությունների ներկայացուցիչների հետ, ինչպես նաև հանդիպումները ոլորտի մասնագետների հետ: Հանձնաժողովի գործունեության ընթացքում կատարվել է ուսումնասիրություններ, հայտնաբերել և անդրադարձ է կատարվել մի շարք խնդիրների, ինչպես նաև ուսումնասիրվել են օրենքներ, միջազգային կոնվենցիաներ և այլ իրավական փաստաթղթեր :

Վերը նշված բոլոր հանդիպումների արդյունքները պարբերաբար քննարկվել են քննիչ հանձնաժողովի աշխատանքային հանդիպումների ընթացքում, տեղի է ունեցել խնդիրների ամփոփ վերլուծություն, որն էլ իր հերթին հանգեցրել է առաջարկությունների:

## ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԵՐԸ ԵՎ ԿԱՏԱՐՎԱԾ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ

Նոյեմբերի 8-ին ՀՀ ԱԺ քննիչ հանձնաժողովը անդրանիկ նիստ է գումարել. օրակարգում եղել է հանձնաժողովի նախագահի տեղակալի ընտրության հարցը: Քվեարկության արդյունքում միաձայն հանձնաժողովի նախագահի տեղակալ է ընտրվել ԱԺ «Իմ քայլը» խմբակցության պատգամավոր Արփիմե Դավոյանը:

Հաստատվել է քննիչ հանձնաժողովի աշխատակարգը, ըստ որի, նիստերը համարվում են հրապարակային և իրավագոր, եթե նիստին ներկա է հանձնաժողովի անդամների ընդհանուր թվի կեսից ավելին:

Քննարկվել է նաև հանձնաժողովի քննության առարկա հանդիսացող հարցերի կապակցությամբ նախաքննության կամ դատավարության որևէ այլ փուլում գտնվող գործերի առկայությունը պարզելու նպատակով տեղեկատվություն ստանալու հարցը: Այդ նպատակով հանձնաժողովը որոշել, հետագայում նաև՝ դիմել է ՀՀ դատախազություն, ՊԵԿ և Հաշվեքննիչ պալատ: Նիստում նշվել է, որ Հայաստանում կա 30 մետաղական հանքավայր: Հանձնաժողովն իր աշխատանքները սկսել է հանրային հնչեղություն ունեցող հարցերից: Աշխատանքը բաժանվել է հատվածների. ուսումնասիրել Ամուլսարի հանքի շահագործման թույլտվության, Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատի, Թեղուտի, Սոթքի և Մղարդի հանքավայրերի հետ կապված հարցերը: **Նիստի մանրամասները հետևյալ հղումով՝**

[http://www.parliament.am/news.php?cat\\_id=2&NewsID=12307&year=2019&month=11&day=08&lang=arm:](http://www.parliament.am/news.php?cat_id=2&NewsID=12307&year=2019&month=11&day=08&lang=arm:)

- 1) **Նոյեմբերի 25-ին** քննիչ հանձնաժողովը հրավիրած նիստում քննարկել է ոլորտի վերաբերյալ ՀՀ գլխավոր դատախազության և ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության հանձնաժողովին տրամադրված տեղեկատվությունները: Քննարկվել են մետաղական հանքարդյունաբերության ոլորտին առնչվող հարցեր:

Նիստում նշվել է, որ ուսումնասիրություններ կիրականացվեն Թեղուտի, Սողբի, Ամուլսարի, «Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատ» ՓԲԸ-ի և Մղարթի մետաղական հանքավայրերում:

Դատախազությունը տեղեկացրել է, որ երկու հանքավայրի նկատմամբ կան հարուցված քրեական գործեր: Հանքավայր շահագործող 27 ընկերություններն ունեն լիցենզիաներ, որոնց ժամկետներն ավարտվում են սկսած 2025-2045 թվականներին: Շեշտադրվել է այն փաստը, որ ակտիվ շահագործման փուլում գտնվող հանքավայրերից ոչ մեկը շահութահարկ չի վճարում, այսինքն շահույթով չի աշխատում:

Առաջարկվել է ուսումնասիրել այդ կազմակերպությունների ներդրումային ծրագրերը, դրանց ծավալները, նպատակները:

ԱԺ տնտեսական հարցերի մշտական հանձնաժողովի նախագահ Բաբկեն Թունյանը ներկայացրել է տնտեսվարող սուբյեկտների վերաբերյալ պատկան մարմիններին ուղղված հարցերի ցանկը: Կարևորվել է հանքավայրերի իրական սեփականատերերի, հանքանյութի արտահանման ծավալների, տվյալ կազմակերպության աշխատողների թվի, միջին աշխատավարձերի և այլ հարցերի վերաբերյալ տեղեկատվության տրամադրումը: Առաջարկ է եղել ուսումնասիրել նաև կազմակերպությունների սեփականաշնորհման գործարքներն ու կնքված պայմանագրերը: Վերջինս հանձնաժողովի կողմից ընդունվել ի գիտություն:

Նշված հարցերի առնչությամբ հանձնաժողովը կատարել է հարցումներ, որոնց ի պատասխան ՊԵԿ-ից ստացվել է մաքսային սահմանն հատած ապրանքների վերաբերյալ տեղեկատվություն, որի բացվածքը այդպես էլ չի պարզաբանվել ՊԵԿ-ի կողմից, չնայած հանձնաժողովի բազմաթիվ բանավոր՝ հեռախոսազանգով կատարված հարցումների:

Ավելին, հանձնաժողովի իրավասությունը այդ հարցերի շրջանակում պարզելու համար հանձնաժողովի հաջորդ նիստին հրավիրվել է ՊԵԿ-ի նախագահ Դավիթ Անանյանը, որը անհայտ պատճառներով չի ներկայացել հանձնաժողովի նիստին, դրանով իսկ չնպաստելով հանձնաժողովի արդյունավետ աշխատանքների իրականացմանը:

***Նիստի մանրամասները հետևյալ հղումով՝***

[http://www.parliament.am/news.php?cat\\_id=2&NewsID=12370&year=2019&month=11&day=25&lang=arm](http://www.parliament.am/news.php?cat_id=2&NewsID=12370&year=2019&month=11&day=25&lang=arm)

**2) Դեկտեմբերի 27-ին տեղի է ունեցել քննիչ հանձնաժողովի աշխատանքային քննարկում:**

Քննարկվել են հանքարդյունահանման և շրջակա միջավայրի խնդիրներ:

Բնապահպան-իրավաբան Նազելի Վարդանյանը հանձնաժողովի անդամներին է ներկայացրել Ամուլսարի ոսկեբեր քվարցիտների հանքավայրի շահագործման ծրագրի վերաբերյալ 33 էջից բաղկացած եզրակացություն: Նրա հավաստմամբ՝ ուսումնասիրվել է 10.000 էջ փաստաթուղթ: Արդյունքում պարզվել է, որ մեր երկրում հանքարդյունահանումն իրականացվել և իրականացվում է մի շարք օրենքների, օրենսգրքերի և միջազգային կոնվենցիաների խախտումներով: Ըստ բնապահպան-իրավաբանի՝ նախորդ իշխանություններն Ամուլսարի շահագործման հետ կապված անօրինական որոշումներ են կայացրել: Ջրային օրենսգրքով և «Սևանի մասին» օրենքով արգելվում է լճի ջրահավաք ավազանի տարածքում հանքարդյունահանության իրականացումը: ՀՀ օրենսդրությամբ և միջազգային կոնվենցիաներով չի թույլատրվում հանք շահագործել այն տեղանքներում, որտեղ ապրում են Կարմիր գրքում գրանցված կենդանատեսակներն ու թռչնատեսակները: Բանախոսն անդրադարձել է նաև Ջերմուկի շրջակա միջավայրի խնդիրներին և անթույլատրելի համարել քաղաքի հարևանությամբ հանքի շահագործումը: Նա մեջբերել է մի քանի օրինակներ, ապա փաստել Լիճքի հանքային ջրի անհետացման մասին, որն, ըստ նրա, հետևանք է այդ տարածքում ոսկու հանքի գործունեության: Նազելի Վարդանյանը խոսել է նաև բազմաթիվ այլ խախտումների մասին:

***Նիստի մանրամասները հետևյալ հղումով՝***

[http://www.parliament.am/news.php?cat\\_id=2&NewsID=12532&year=2019&month=12&day=27&lang=arm](http://www.parliament.am/news.php?cat_id=2&NewsID=12532&year=2019&month=12&day=27&lang=arm)

**3) Հանձնաժողովի հաջորդ աշխատանքային քննարկումը տեղի է ունեցել սույն թվականի փետրվարի 5-ին:** Քննարկվել է Ամուլսարի շահագործման տարածքում առկա պատմամշակութային հուշարձանների պահպանության թեման: Հանդիպմանը հրավիրվել են Պատմամշակութային ժառանգության գիտահետազոտական կետոնից Հակոբ Սիմոնյանը և ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտի տնօրեն Պավել Ավետիսյանը:

**4) 2020 թվականի մարտի 9-ին տեղի է ունեցել քննիչ հանձնաժողովի հերթական նիստը:** Քննարկվել են շրջակա միջավայրին առնչվող մի շարք խնդիրներ:

ՀՀ շրջակա միջավայրի այս նախարար Էրիկ Գրիգորյանն անդրադարձել է մետաղական հանքավայրերի բնապահպանական ռիսկերին, ներկայացրել գլխավորած կառույցի՝ այս ոլորտում իրականացրած և իրականացվելիք միջոցառումները, խոսել նախատեսվող օրենսդրական բարեփոխումների փաթեթի մասին: Նրա հավաստմամբ՝ բնագավառում «աղտոտիք, ապա վճարիք» սկզբունքից անցում է կատարվելու «կանխարգելիչ աղտոտումը» սկզբունքին, ինչը հնարավորություն կտա վերականգնելու շրջակա միջավայրը, պահպանել օդի, ջրի, հողի մաքրությունը: Ներդրվելու է մշտադիտարկման համակարգ: Յուրաքանչյուր հանքարդյունահանող կազմակերպություն եռամսյակը մեկ կներկայացնի շրջակա միջավայրի վերաբերյալ դիտարկումներ: Ջրային օրենսգրքում նախատեսվող փոփոխությամբ կստեղծվի ջրային ընդունող մարմին, որը կուսումնասիրի ջրի աղտոտվածության աստիճանը: Ուսումնասիրություններ կիրականացվեն բոլոր պոչամբարներում: Ըստ վտանգավորության աստիճանի՝ հարկեր կսահմանվեն թափոնների համար: Առաջիկայում կսկսեն գործել գերժամանակակից շարժական լաբորատորիաներ, որոնք տեղում դիտարկումներ կանեն և անմիջապես կներկայացնեն շրջակա միջավայրի վրա հանքարդյունահանման ազդեցությունը: Նախարարը նաև տեղեկացրել է, որ հիմնովին բարեփոխվելու է ոլորտի օրենսդրական դաշտը, քննարկման փուլում են մի շարք նախագծեր, որոնք մոտ ապագայում կներկայացվեն խորհրդարան:

Հանձնաժողովը պատրաստակամություն է հայտնել աջակցելու գործադիր իշխանությանը ժամանակի պահանջներին համապատասխանող օրենսդրական դաշտ ունենալու գործում:

Բնապահպան-իրավաբան Նազելի Վարդանյանն անդրադարձել է բնապահպանական և բնօգտագործման հիմնախնդիրներին, Ամուլսարի շահագործմանը, որոշակի օրենսդրական դրույթների նպատակահարմարությանը

### **Նիստի մանրամասները հետևյալ հղումով՝**

[/http://www.parliament.am/committees.php?do=show&ID=111212&showdoc=2839&cat\\_id=729&month=03&year=2020&lang=arm/:](http://www.parliament.am/committees.php?do=show&ID=111212&showdoc=2839&cat_id=729&month=03&year=2020&lang=arm/)

Հանձնաժողովը գործունեության ընթացքում կատարել է մի շարք հանքավայրերի ուսումնասիրություն ու հարցումներ:

Հավելենք նաև, որ ի պատասխան ՀՀ գլխավոր դատախազին հասցեագրված 2019 թվականի



նոյեմբերի 11-ի 114/2780-2019 թվականի գրության՝ ստացել ենք պատասխան, որ

ՀՀ գլխավոր դատախազության պետական շահերի պաշտպանության վարչությունում կատարված ուսումնասիրությամբ պարզվել է, որ Բնապահպանության և ընդերքի տեսչական մարմնի ղեկավարի՝ 2018 թվականի հուլիսի 4-ի թիվ 30 և 2018 թվականի հուլիսի 17-ի թիվ 33-Ա հանձնարարագրերի հիման վրա <<Լիդիան Արմենիա>> փակ բաժնետիրական ընկերությունում իրականացված ստուգման արդյունքում արձանագրվել են Ամուլսարի ոսկեբեր երկրորդային քվարցիտների հանքավայրի լեռնահատկացման ԼՎ-245 ակտի սահմաններում ընկերության կողմից ընդերքի ապօրինի օգտագործման փաստեր: Դրա և մի քանի այլ հանքավայրերի կողմից ներկայացված ֆինանսական և այլ հաշվետվությունների օրինականությունը, հիմնավորվածությունը և արժանահավատությունը ապահովվելու համար դիմել ենք ՀՀ հաշվեքննիչ պալատին՝ Հանձնաժողովին արհեստավարժ մասնագետներ տրամադրելու համար:

10.12.2019 թվականին պատասխան գրություն ենք ստացել, որ նշված ոլորտի մասնագետներ տվյալ պահի դրությամբ ՀՀ հաշվեքննիչ պալատում առկա չեն:

Ի պատասխան 2020 թվականի փետրվարի 28-ի N 114/1692-2020 գրության ԿԳՄՍ նախարարությունը հայտնել է, որ «Պատմամշակութային ժառանգության գիտահետազոտական կենտրոն» ՊՈԱԿ-ի մասնագետների կողմից Ամուլսարի շրջակայքում՝ Գորայք և Գնդեվազ համայնքների տարածքում հայտնաբերվել է պատմական տարբեր դարաշրջաններով թվագրվող հնագիտական հուշարձաններ: Աշխատանքների արդյունքում կազմվել է 55 նորահայտ հուշարձանախմբի վկայագիր: ՀՀ Սյունիքի մարզի Գորայք համայնքի տարածքում կազմվել է 29 վկայագիր, որից նախարարության փորձագիտական հանձնաժողովում քննարկվել է 19-ը և ստացել հուշարձանի կարգավիճակ: ՀՀ Վայոց ձորի մարզի Գնդեվազ համայնքի տարածքում կազմվել է 26 վկայագիր, որից 3-ը փորձագիտական հանձնաժողովի որոշմամբ ստացել է հուշարձանի կարգավիճակ: Այսպիսով, 55 նորահայտ հուշարձաններից փորձագիտական հանձնաժողովի նիստում քննարկվել և հուշարձանի կարգավիճակ է ստացել 22-ը: Միևնույն ժամանակ, հայտնել են, որ առաջիկայում կքննարկվի նաև մնացած նոր հայտնաբերված օբյեկտներին նորահայտ հուշարձանի կարգավիճակ տալու հարցը:

Նշենք նաև, որ այս ընթացքում անցկացվել է մի շարք նիստեր, քննարկումներ, ինչպես բաց՝ լուսաբանվող, այնպես էլ փակ՝ քննարկումների տեսքով, ինչպես նաև հանձնաժողովի անդամներով 10-ից ավելի հանդիպումներ ենք ունեցել Գնդեվազ գյուղում ակտիվիստ-

բնապահպանների հետ: Անդրադարձ է կատարվել նաև Ամուլսարի խնդրին, որի արդյունքում հանձնաժողովը փորձել է պարզել՝ արդյոք թույլատրելի է այս պայմաններում շահագործել Ամուլսարի հանքը, թե՛ ոչ, քանի որ ՀՀ-ն ժամանակին միջազգային կոնվենցիաներ է ստորագրել, ըստ որոնց, եթե կա հնէաբանական գտածո, ապա իրավունք չկա այդտեղ հանք շահագործելու:

Հարցերը պարզ դարձնելու համար իրականացվել են վկայագրերի թարգմանություններ և ներկայացվել ՅՈՒՆԵՍԿՕ-ի համաշխարհային ժառանգության կենտրոնի տնօրենին:

02.05.2020 թվականին ստացել ենք պատասխան, որ շահագործումը անթույլատրելի է: Ավելին, հրավիրել են վիդեոկոնֆերանսի միջոցով քննարկել այդ ոլորտի խնդիրները: Այն քննվել է նիստում, ինչպես նաև հաշվետվություն է ներկայացվել հանձնաժողովի ողջ ընթացքում կատարված աշխատանքների մասով:

Այնուհետև, թվով 27 մետաղական հանքարդյունաբերության ոլորտի ընկերությունների է ուղարկվել հանձնաժողովի անդամների կողմից մշակված հարցաշար, որին ի պատասխան ստացվել են հետևյալ պատասխանները.

Պահանջված տեղեկատվությունը ներկայացրել են՝ <<Ղարագույաններ>> ՓԲԸ-ն, հնարավոր տարբերակով՝ <<Մուլտի Գրուպ>> ՍՊԸ-ն, որոշ տեղեկություններ <<ՉԱԱՐԱՏ ԿԱՊԱՆ>> ՍՊԸ-ն և մնացած փաստաթղթերի մասով նշել, որ պահանջվող նյութերին և փաստաթղթերին կարող ենք ծանոթանալ դրանց գտնվելու վայրում: Միննույն ժամանակ պատրաստակամություն հայտնել տրամադրել նաև մյուս փաստաթղթերը, ինչը անհրաժեշտ կդառնա:

Մինչդեռ <<ԳեոՊրոՄայնինգ Գոլդ>> ՍՊԸ-ն, <<Սազամար>> ՓԲԸ-ն, <<ԱԳՐԱԿԻ ՊՂՆՁԱ-ՄՈՒԼԻԲԴԵՆԱՅԻՆ ԿՈՄԲԻՆԱՏ>> ՓԲԸ-ն և <<ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՔԱԳՈՐԾՆԵՐԻ ԵՎ ՄԵՏԱԼՈՒԳՆԵՐԻ ՄԻՈՒԹՅՈՒՆ>> ՀԿ-ն բոլոր մետաղական ընկերությունների անունից ներկայացրել են պատասխան, որ պահանջված տեղեկատվությունը չեն կարող ներկայացնեն կատարելով օրենսդրական հղում: <<Թեղուտ>> ՓԲԸ-ն նշել է, որ դիմել է իրավաբանական խորհրդատվություն ստանալու, որպեսզի իրենց պարզ լինի պատասխանի հնարավորության իրավական գնահատման համար: Իսկ <<ԼԵՌ-ԷՔՍ>> ՍՊԸ-ն տեղեկատվության չտրամադրումը հիմնավորել է արտակարգ իրավիճակով պայմանավորված աշխատակիցների սակավությամբ:

Մյուս ընկերությունները առհասարակ չեն տրամադրել որևէ տեղեկատվություն:

## Վերլուծություն

Քննիչ հանձնաժողովի գործունեության շրջանակներում փորձել ենք վեր հանել մետաղական հանքարդյունաբերության ոլորտում ներդրումային ծրագրերի շրջանակներում գործադիր իշխանության մարմիններին ներկայացված և նրանց կողմից ընդունված ֆինանսական և այլ հաշվետվությունների օրինականությունը, հիմնավորվածությունը և արժանահավատությունը վերջին տարիների գործունեության հետ կապված խնդիրները, որոնք ուղղակիորեն կապված են օբյեկտիվ և սուբյեկտիվ գործոնների հետ: Այդուհանդերձ, սուբյեկտիվ գործոնների հետ կապված խնդիրները բնորոշ են եղել նախկին կառավարման համակարգի ստվերային և ոչ թափանցիկ գործունեությանը, որը հիմնականում հիմնված է շահառուների կարծիքների ու մամուլում հրապարակված խնդիրների վրա, այդ պատճառով այս զեկույցի մեջ հիմնականում անդրադառնալու ենք օբյեկտիվ խնդիրներին՝ հետագա գործունեության համար բացառելու սուբյեկտիվ գործոնով պայմանավորված չարաշահումները և ծրագրերի ոչ պատշաճ իրականացումը:

Ընդհանրացնելով բոլոր խնդիրների ծագման աղբյուրը, կարող ենք պնդել, որ դրանք հիմնականում կապված են ոչ թափանցիկ գործունեության հետ: Քննիչ հանձնաժողովը իր գործունեության ընթացքում որոշակի խնդիրներ ունեցավ պատշաճ և ժամանակին տեղեկատվության ստացման հետ կապված, որի պատճառով բավականին դանդաղեց հանձնաժողովի գործունեությունը և որոշ հարցերում հնարավոր չդարձավ տարբեր ծրագրերի ամբողջական գործունեության գնահատումը:

Այդ պատճառով այս զեկույցում ներկայացնելու ենք այն ընդհանուր խնդիրները, որոնք կապված են մետաղական հանքարդյունաբերության ոլորտի օրենսդրական բացերին, ինչպես նաև միջազգային կառույցների հետ պատշաճ համագործակցության բացակայությանը, որոնց հետևանքով ոլորտում առկա են բազմաթիվ բացթողումներ:

## **Թափանցիկություն և հաշվետվողականություն**

Հիմնական խնդիրներից մեկը, որին բախվեց քննիչ հանձնաժողովը հանքարդյունահանողների գործունեությունն ուսումնասիրելու ընթացքում կատարված հարցումներին ոչ ամբողջական պատասխանելն է կամ պատասխաններից խուսափելը, որը հիմնականում պայմանավորված է եղել նրանով, որ պահանջված տեղեկատվությունները պարունակել են առևտրային գաղտնիք: Դրանք անհասանելի են եղել լիարժեք ուսումնասիրություններ կատարելու ընթացքում:

Այս տեսանկյունից անհրաժեշտություն է Հայաստանի Հանրապետությունում ոլորտում իրականացված ամսական կատարողականները, վերջնական հաշվետվությունները, ակտերը, շրջական միջավայրի վրա ազդեցության գնահատականները և այլ փաստաթղթերը էլեկտրոնային եղանակով տեղադրել Շրջակա միջավայրի նախարարության կողմից ստեղծված հարթակում, որը հնարավորություն կտա յուրաքանչյուր շահագրգիռ կողմի տեսնել և ուսումնասիրել որևէ ծրագրի ընտրման տրամաբանությունը, հիմնավորվածությունը, նախագծային աշխատանքների իրականացման փուլերը, աշխատանքները, դրանց ծավալները, ծավալների ավելացումներն ու նվազեցումները: Էլեկտրոնային միասնական բազայում առկա թերի տեղեկատվությունը հղի է կոռուպցիոն ռիսկերով ու ոչ հաշվետվողական մոտեցումներով: Մետաղական հանքարդյունաբերության ոլորտում կատարվող բոլոր գործողությունները պետք է լինեն ամբողջապես հասանելի հանրության համար, որով և կհավաստվի իրացվող բոլոր միջոցների հաշվետվողականությունը և թափանցիկությունը:

Անհրաժեշտ է կատարել գնահատում բոլոր իրականացված ծրագրերի՝ ցույց տալու համար այդ ծրագրերի արդյունավետությունը, վեր հանելու բոլոր թերությունները՝ դրանց համապատասխան գնահատականներ տալու և հետագայում հնարավոր բացթողումներից խուսափելու նպատակով:

## ԵԶՐԱԿԱՅՈՒԹՅՈՒՆ

Ամփոփելով հաշվետվությունը, հիմնվելով հանձնաժողովի կողմից կատարված հարցումների պատասխանների վրա, արձանագրում ենք, որ տեղական, ազգային կամ միջազգային նշանակության մշակութային հուշարձանների և դրանց բնական միջավայրի ապամոնտաժային ոչնչացումը, դրանց գտնվելու վայրի զննումը կամ այլ գործունեությունը կարող է խախտել Հայաստանի Հանրապետության կողմից վավերացված ՅՈՒՆԵՍԿՕ-ի մշակութային կոնվենցիաներով ամրագրված ՀՀ հանձնառությունները /հիմք՝ ՅՈՒՆԵՍԿՕ-ի համաշխարհային ժառանգության կենտրոնի տնօրենի գրությունը/:

### Առաջարկություններ

1. Կազմակերպել վիդեոկոնֆերանս ՅՈՒՆԵՍԿՕ-ի համաշխարհային ժառանգության կենտրոնի փորձագետների հետ՝ ոլորտի խնդիրները քննարկելու նպատակով:
2. Շրջակա միջավայրի նախարարության հետ համատեղ կազմակերպել լայնածավալ կրթական և իրազեկման միջոցառումներ մետաղական հանքարդյունաբերության ոլորտի ներկայացուցիչների հետ՝ թափանցիկ աշխատելու և դրա արդյունքում դրական կողմերը արձանագրելու տեսանկյունից:
3. Նախաձեռնել օրենսդրական փոփոխություն, որը թույլ կտա մասնավոր կապիտալի ներգրավումը և նոր ներդրումային միջավայրի ձևավորման հնարավորություն մետաղական հանքարդյունաբերության ոլորտում:
4. Մշակել կարգավորման մեխանիզմ հանքարդյունաբերողների ընթացիկ պարտավորությունների պարտադիր ամենամսյա հրապարակման համար:
5. Արդյունավետ կառավարման ապահովման և ֆինանսական ցուցանիշների վերահսկողության նպատակով բոլոր հնարավոր գործառնություններում անհրաժեշտ է ձևավորել նոր չափորոշիչներ:



ՄԵՏԱՂԱԿԱՆ ՀԱՆՔԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏՈՒՄ ՆԵՐԴՐՈՒՄԱՅԻՆ  
ԾՐԱԳՐԵՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ԳՈՐԾԱԴԻՐ ԻՇԽԱՆՈՒԹՅԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻՆ  
ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ԵՎ ՆՐԱՆՑ ԿՈՂՄԻՑ ԸՆԴՈՒՆՎԱԾ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԵՎ ԱՅԼ

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՕՐԻՆԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ,  
ՀԻՄՆԱՎՈՐՎԱԾՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԱՐԺԱՆԱՀԱՎԱՏՈՒԹՅՈՒՆԸ  
ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՂ ՔՆՆԻՉ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

0019 ՀՀ, Երևան, Մ. Բաղրամյան 19, +374 11 51 13 42

### ՆԻՍՏԻ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Հայաստանի Հանրապետության Ազգային Ժողովի <<Մետաղական  
հանքարդյունաբերության ոլորտում ներդրումային ծրագրերի շրջանակներում  
գործադիր իշխանության մարմիններին ներկայացված և նրանց կողմից ընդունված  
ֆինանսական և այլ հաշվետվությունների օրինականությունը,  
հիմնավորվածությունը և արժանահավատությունը ուսումնասիրող>> քննիչ  
հանձնաժողովը 18.06.2020թ. փակ նիստի ժամանակ որոշեց.

հաստատել քննիչ հանձնաժողովի գործունեության արդյունքների վերաբերյալ  
զեկույցը և ուղարկել Ազգային Ժողովի նախագահին:

Հանձնաժողովի նախագահ՝  
Անդամներ՝

*Ս. Բաղրամյան*  
*Ս. Բաղրամյան*

Սերգեյ Բաղրամյան  
Արփինե Դավոյան  
Անի Սամսոնյան

*Գ. Բաղրամյան*  
*Գ. Բաղրամյան*

Արկադի Խաչատրյան  
Բաբկեն Թունյան  
Գոռ Գևորգյան  
Հրանտ Մադաթյան

*Մ. Բաղրամյան*

Նաիրա Զոհրաբյան  
Սոֆիա Հովսեփյան  
Սասուն Միքայելյան

Վարազդատ Կարապետյան





ՄԵՏԱՂԱԿԱՆ ՀԱՆՔԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏՈՒՄ ՆԵՐԴՐՈՒՄԱՅԻՆ  
ԾՐԱԳՐԵՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ԳՈՐԾԱԴԻՐ ԻՇԽԱՆՈՒԹՅԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻՆ  
ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ԵՎ ՆՐԱՆՑ ԿՈՂՄԻՅ ԸՆԴՈՒՆՎԱԾ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԵՎ ԱՅԼ  
ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՕՐԻՆԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ, ՀԻՄՆԱՎՈՐՎԱԾՈՒԹՅՈՒՆԸ  
ԵՎ ԱՐԺԱՆԱՀԱՎԱՏՈՒԹՅՈՒՆԸ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՂ ՔՆՆԻՉ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

---

0019 ՀՀ, Երևան, Մ. Բաղրամյան 19, +374 11 51 13 42

---

«29» դեկտեմբերի 2020թ.

## ՀՀ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ ՊԱՐՈՆ ԱՐԱՐԱՏ ՄԻՐԶՈՅԱՆԻՆ

Հարգելի պարոն ՄԻՐԶՈՅԱՆ,

Հիմք ընդունելով «Ազգային ժողով կանոնակարգ» ՀՀ Սահամանդրական օրենքի 20-րդ հոդվածի 7-րդ մասը, համաձայն որի՝ քննիչ հանձնաժողովի լիազորությունների ժամկետը մինչև վեց ամիս է, որը կարող է մեկ անգամ, հանձնաժողովի առաջարկությամբ՝ Ազգային ժողովի որոշմամբ երկարաձգվել մինչև վեց ամսով, պետք է նշեմ, որ 26.09.2019 թվականին ստեղծված */Հանձնաժողովի լիազորությունների ժամկետը երկարաձգվել է 12.05.2020 թվականին/* «Մետաղական հանքարդյունաբերության ոլորտում ներդրումային ծրագրերի շրջանակներում գործադիր իշխանության մարմիններին ներկայացված և նրանց կողմից ընդունված ֆինանսական և այլ հաշվետվությունների օրինականությունը, հիմնավորվածությունը և արժանահավատությունը ուսումնասիրող քննիչ հանձնաժողովի» լիազորությունների ժամկետն ավարտվել է:

Համավարակի և պատերազմական հիմքերով պայմանավորված աշխատանքի կատարման անհնարինության հետևանքով զեկույցը ներկայացնում եմ դեկտեմբեր ամսին:

Խնդրում եմ հարցի քննարկումը «Ազգային Ժողով կանոնակարգ» ՀՀ  
Սահամանդրական օրենքի 38-րդ հոդվածի 3-րդ մասի 1-րդ կետի համաձայն ընդգրկել  
հերթական նիստերի օրակարգ:

Առդիր՝ 14 թերթ:

ՀԱՐԳԱՆՔՈՎ՝

ՔՆՆԻՉ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ՝ *Արմեն* ՍԵՐԳԵՅ ԲԱԳՐԱՏՅԱՆ